ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14. օգոստոսի 2017 թվական
N 46

գյուղ Կարմրաքար

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ
պարոն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 8-ի 5-րդ նիստի թիվ 9 որոշումը:

Հարգանքով՝

Աբգուր Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

8 օգոստոսի 2017 թվական գյուղ Կարմրաքար

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 110 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԸ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքերից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի սեփականությանը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 110 հեկտար արոտը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, երեք ամիս ժամկետով, տրամադրել վարձակալության:
2. Համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյանին արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով:

Ավագանու անդամներ՝

Կողմ - 5 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Մանվել Մաթևոսյան
Երվանդ Մաթևոսյան
Նվեր Կարապետյան
Սուսաննա Ավետիսյան
Սուրեն Սարգսյան

Կարմրաքար համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյան

8 օգոստոսի 2017 թվական
գյուղ Կարմրաքար